ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

(արտահերթ նիստը գումարվել է 2025 թ.-ի մայիսի 15-ին)

Նիստին մասնակցում էին կառավարման խորհրդի 7 անդամներ, բացակա՝ 2 անդամ: Նիստին մասնակցում է «Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ Ռուզաննա Ամիրյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.« Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-Ի 2025թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի մեջ փոփոխության կատարում /զեկուցող՝ « Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ Ռուզաննա Ամիրյան /:

Լսեցին – 1. « Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-Ի 2025թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի փոփոխության կատարման մասին:

«Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-Ի հաշվապահ Ռուզաննա Ամիրյանը հայտնեց, որ՝« Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 11-րդ դասարանի 4 աշակերտներ 2024-2025 ուսումնական տարվա դպրոցականների ռուսաց լեզվի առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում արժանացել են առաջին, երկրորդ և երկու երրորդ կարգի դիպլոմների և ստանալու են ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված կրթաթոշակ՝ ընդհանուր 330000 (երեք հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամի չափով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշումը և ՀՀ ԿԳՄՍ նախարարի2023 թվականի մայիսի 12-ի թիվ 52-Ն հրամանով հաստատված հանրակրթական ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների սովորողներին անվանական կրթաթոշակի տրամադրման կարգի պահանջներն ու «2024-2025 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլերի դիպլոմակիրներին անվանական կրթաթոշակ տրամադրելու մասին» 2025 թվականի ապրիլի 4-ի 817-Ա/2 հրամանը:

« Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով ներկայացվածը և քննարկումները՝ կառավարման խորհուրդը

Որոշեց.

1. Հավանություն տալ.« Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 2025թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի փոփոխությանը և ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ՝ հաստատման::

Կառավարման խորհրդի նախագահ՝ Ն. Այվազյան

Քարտուղար՝ Շ. Գալստյան